

Անգլիա, իր հակահիմնական գրականութիւնը ունի՝ որով մեծ վտանգի մը ենթարկուած է ամուսնութեանց ապագան։

Այսօրուան անգլիացիները, — մանաւանդ անգլիացիները — անտանիւի կը գտնեն ամուսնութիւնը իր տնտեսական, բարոյական, ընկերական և նոյն իսկ հոգեբանական պայմաններուն տեսակէտով։

Երբեմնի այդ խոհեմ, պարկեշտ, առաքինի անգլիացիները — գոնէ մենք այսպէս կը կարծէինք — հիմա կեղծ են ազատ համարձակ կը պոռան թէ ամուսնութիւնը աշխարհիս ամենէն գարշելի, ամենէն քուսակաւոր և ամենէն ատելի մէկ օրէնքն է որուն ջունկը կը պահանջեն և կապահովեն թէ օրին մէկը, իրաւ, այդ մօտան ալ պիտի անցնի։

Եւ մը առարկութիւններ մէջ տեղ կը գնեն անոնք, հաստատելու համար թէ իրենց պաշտպանած դատը արդար է և պէտք է որ իրենք յաղթանակը տանին ուշ կամ կանուխ։

— Անյիշատակ ժամանակներէ ի վեր, կը պոռան այդ սմանդուկ անգլիացիները, ամուսնութիւնը մեր սեռին համար չարչարանք մը, և մեր անկախութիւնը բռնարարող օրէնք մըն է պարզապէս։ Ամուսնութեան հիմը բարբարոսական ժամանակներէ ի վեր միեւնոյնը մնացած է։ այսինքն կինը գերի ընել է ու կանը։ Թէեւ այսօր ձեւակերպութիւնները աւելի փափուկ են, աւելի ոսկեզօծեալ և աւելի բարեկիրթ, սակայն սկզբունքը նորէն միեւնոյնն է, չէ փոխուած, ամուսինը իր կնոջ տէրն է, և շատ անգամ կինը ամուսնոյն մէկ գոյքն է, սեփականութիւնը, ասլորանքը։ Մինչեւ հիմա ձայն չէինք հանած, բայց ասկէ ետքը պիտի տեսնէք . . . :

Թ.Ա.ՏԱՄԻՍ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Թուրք կառավարութիւնը իբրեւ պատասխան Ռուսիոյ ազդու ծանուցագրին, որով պատերազմական տուգանքին մնացորդ վճարումները կը պահանջէր, միջոց մը կը խորհի զայն գոհացնելու, առանց իր արդի պիւտոնէն ալ շատ ծանրաբեռնելու։

Կառավարիչ 10 տարեվճարով պարտքը հատուցանել, առանց սակայն առաջուց որոշուած տարեվճարները գաղտնիցելու։

Ռուսիա երկար կը գտնէ 10 տարուան պայմանագրով և վճարուելիք տարեկան գումարը աւելցնել կուզէ՝ լուրջ երաշխաւորութիւն մըն ալ պահանջելով։

Բանակցութիւնները կը շարունակուին և անտարակոյս կարգադրութեան մը պիտի յանգին։

— Հանրային պարտուց վարչութեան նախագահութեան գրութիւնը փոփոխելու հարցը լուրջ կերպարանքներ կառնէ։ Մինչեւ հիմա այդ նախագահութիւնը փոխն ի փոխը անգլիական և ֆրանսական պարտապահանջներու ներկայացուցիչներուն կը յանձնուէր։ Հիմա զայն փոփոխաբար ամեն պետութիւններու փոխանորդներուն յանձնել կառավարկուի։

Կ Ր Է Տ Է

Փրանսայի, Ռուսիոյ, Անգլիոյ և Իտալիոյ զեապանները, ֆրանսացի և թուրք զինուորներու միջեւ տեղի ունեցած զուտ տեղական հանգամանք ունեցող կռիւներուն վերայ, որոշած են պէտք եղած հրահանգները տալ, համաձայնեցնելու համար միջազգային իշխանութիւնները և թուրք պաշտօնատարները, որով կարելի պիտի ըլլայ այդ տեսարաններուն կրկնութիւնը արգելել։

Սուլթանը Փրանսայի գործակաւորին ծանուցագիր մը գրած է իր ցաւակցու-

թիւնները յայտնելով վերջի պատահարներուն համար և իմացնելով թէ անոնց կրկնութիւնը արգելելու համար հրահանգներ ղրկուած են Կրէտէի զինուորական կառավարիչներուն։

ՍՊԱՆԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Միացեալ Նահանգներու նախագահին մէկ յայտարարութիւնը մինչեւ մայիս 21 պայմանագրով կուտայ սպանիական նաւերուն, իր նաւահանգիստներէն հեռանալու համար։

— Ամերիկացի Ռովըն տեղակալը Գուպայի արեւելեան եզերքը ցամաք ելած է, ապստամբներու բանակաւորին երթալու և անոնց Միացեալ Նահանգներու հետ համաձայն գործելուն խոստումը առնելու համար։

— Կըսուի թէ սպանիական երեք յաժաւորակ և եօթը թօրփիլանաւ գաղանի ճամբայ ելած են, Ատլանտեան ովկիանոսը անցնելու նպատակով։

— Ամերիկեան թօրփիլանաւ մը և սպանիական թնդանթակիր մը առջի անգամ ըլլալով թնդանթի 11 հարուած փոխանակած են Մաթանզաւի առջեւ։ Թօրփիլանաւը ետ քաշուած է, բաւական զննուած։

— Սպանիական նաւատորմի ճամբայ ելած է Մանիլեան կղզիներէն, ամերիկեան նաւատորմի զինուորներու համար։

Առաջին լուրջ հանդիպումը պիտի ըլլայ ատիկայ։

— Ամերիկեան երեք զրահաւորներ ուրմբակոծած և կործանած են Մաթանզաւի մարտկոցները։ Սպանիացիներու թնդանթաձգութիւնը բոլորովին ապարդիւն եղած է և ամերիկեան ոչ մէկ զրահաւոր զննուած։ Կը կարծուի թէ սպանիացիներու կորուստը շատ մեծ է։

ՍՆԳԼԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Թայվոզ հրատարակած է Բէքինէ ստացած մէկ հեռագիրը, որու համեմատ Ռուսիա Թայվէնլանի հարաւակողմը իբրեւ իր նաւային գործողութիւններուն կեդրոնը նկատելով, չպիտի թողարկէ օտար վաճառականական նաւերու հոն մտնելը։

Թայվոզ այդ լուրը մեկնաբանելով ըսած է թէ ատիկա Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Մուրավիեֆի կոմսին տուած ապահովութիւններուն բացարձակ ժխտումն է և թէ ասկէ ետքը Անգլիոյ պետական մարդիկը պէտք են չհաւատալ Ռուսիոյ տուած ապահովութիւններուն։

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱՋՍԻՆ ԱՌԹԻ

— Իրաւ է, միւսիս, ճէնկը պաշտօնէ՞ր է։ Ուր օրէ ի վեր այս միօրինակ հարցումին պատասխանելու հարկին մէջ կը գրգռուիս, ո՞ւր . . . :

Հայոց տնտեսական պատկերը կախուած Հալաւի հեռագիրները, կարդալ չգիտողներու ակնարկներուն տակ կը մաշին կորուն ի բուն։

Կարծես վառօդի հոտ մը ունին իրենց վրայ այդ քթի կտորները որոնց մէջ քերնին կը խոթեն, միւսիսէն զատ ժողովներէն բառ մը չգիտողներն անգամ։

Միւնչդեո անդին, աշխարհիս միւս ե-

րեսին վրայ, ռուսները կարճակուն, եւ գոցե մինչեւ այսօր հարիւրաւոր կտրիմներու արիւնք թափուած է, հոս, այդ պատերազմին շուրջ տեսակ մը ուրախութիւն կազդէ ռուսիկին, պարսպ պարտողին, եւ բաղդախնդրին։

Իրենց այդ ուրախութեան պատճառը ի՞նչ է արդեօք։ Ապահովապէս փոքրացիներու վիճակը չէ որ կը հետաքրքրէ զիրենց — ամիս մը առաջ Գուպայի անունը չէին լսած — փաղափակ դաւանանքներ չունին ասոնց, Եանիֆներու չեն համակրիր եւ Գարմենի ու Տոմ Գարցուի հայրենիք չեն ճանչնար՝ որովհետեւ ասոնց ամենը Բաբակալօին մէջ չկան։

Ոչ հողատէր են, ոչ երկազէս եւ ոչ վաճառական, ինչո՞ւ ուրեմն այսքան կը հետաքրքրուին սպանո-ամերիկեան պատերազմով։

* * *

Ողբերգի հասկնալ եւ դիպուածը օգնութեան հասաւ ինծի։

— Բուզում միւսիս, ասօր քեյէկրա՞մ չեկա՞ւ։

— Ինչ կայ որ։

— Սա ամերիկացիները կեմի մը պրոներ են նէ, ասըր կա՞յ։

— Այո՛, քեմ սպանիացիներն ալ ֆանի մը նաւ առին։

— Օ՛խ, օ՛խ, պան մը պիտի հարցնեմ, ա՞մ կրնես, աւ պատերազմը շատ պիտի չէ՞։

— Ես ի՞նչ գիտնամ։ Ինչ ո՞վ կուզես որ յաղթէ։

— Ով կուզէ նէ ան թող յաղթէ, գործը ճէնկ ըլլայ ճէ, ինչ կուզէ նէ ըլլայ։

— Բայց ինչո՞ւ կուզես որ պատերազմ ըլլայ, քեզ ի՞նչ օգուտ։

— Ի՞նչ կրես, միւսիս, նաւը չեմ ուզեր, ճէնկ ըլլայ քի գործերը պացվին։

— Ինչ ի՞նչ գործ կրնես։

— Հի՛յ։

— Ուրեմն, չեմ հասկնար, Ամերիկայի պատերազմէն ի՞նչ գործ կապաւես։

— Նա՞ւը չեմ սպասեր, ողորմած հոգի անուճաւ կրսեր քի, Ամերիկա պատերազմ ըլլայ նէ եաքախին մէջի պանպակը պիտի օսկի կըլլայ, օսկի՛. Խառակեօք օղլուները, Ակորեանները, ադ վախիթեն գէնկիցած են. չե՞ս իմացեր։

* * *

Ահա՛ մարդ մը որ մտնէ ջանցներ քե պատերազմը 100,000 հոգիի կորստեան պատճառ կրնայ ըլլայ, մայրեր իրենց զաւակներ, փոքր իրենց եղբորներն եւ հարսերը փեսաներուն վրայ պիտի լան. սարիներէ ի վեր, աշխատութիւնով, սփռութիւնով առաջ եկած շենքեր, նաւեր, քերտեր, փաղափակ տներ, տներ, տներ կրնան կործանիլ իրենց հետ զանազան միջոցաւ ու կիներ, եւ ասիկն մեր խեղօք գաղթականը 2 1/2 ֆիլոնց քանակ կը խորհի։

Եւ իրաւում ունի։

Ե՞՞՞... անկէց անդին բան չկայ։

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Տիար Բ. Բօլատ, որուն հրաժարիլը ծա-
նուցինք մեր վերջին թիւով, ստիպուած
է իր հրաժարականը ետ առնելով նորէն ըս-
տանձնել Բաղադական ժողովի ատենապե-
տութիւնը:

Ութ օրուան մէջ ի՞նչ դառցաւ որ Տիար
Բօլատ իր որոշումը կը փոխէ...: Mystère!

Եւ որովհետեւ իր քաջութիւնը իբրեւ միակ
պատճառ հիւանդութիւնը մէջտեղ դրած էր,
կը սիրենք յուսալ որ յարգելի ատենապետը
իր առողջութիւնը գտած ըլլալու է այդ կարճ
ժամանակամիջոցին մէջ: Այս պատճառը միայն
պիտի կրնար գոհունակութիւն ազդել իր բազ-
մաթիւ բարեկամներուն:

Ըսողներ ալ կան թէ, Բաղադականին
մնացորդ անդամները հրաժարական տալու
երանաւէտ հարկէն ազատելու համար է որ
Տիար Բօլատ վերստին բռնած է Պէն-էլ-Սու-
րէնի ճամբան:

Տիգրան փաշա, այսօր Մէսաժըրիի շո-
գենաւով կը մեկնի Փրանսա ուր պիտի անցնէ
ամառը:

Տիգրան փաշա մեկնելէ առաջ կարեւոր
հրահանգներ տուած է որուն որ անկ է, դար-
մանելու համար Երեսփոխանական ժողովի
վերջին նիստին մէջ կատարուած առաջնոր-
դական ընտրութեան անկանոնութիւնը:

Այսպէսով Այվազեան Յովսէփ վարդա-
պետի անունը պիտի ջնջուի ընտրելիներու
ցանկէն, և Եգիպտոսի առաջնորդութեան
համար ընտրելի պիտի մնայ միայն Ամենա-
պատիւ Իզմիրեան Սրբազանը:

Բոսկրէի երէկուան թիւը հետեւեալ
լուրը կը պարունակէր.

«Երկրորդի պալատան քարտուղարութե-
ան Դադի Մուխթար փաշայի ուղղուած հե-
ռագիր մը կը ծանուցանէ թէ Սուլթանը նե-
րում շնորհած է բժիշկ Տօք. Յակոբեանի,
Գրիգոր Անանեանի և վաճառական Գրիգոր-
եանի, որոնք Եգիպտոս կը գտնուին, և ի բա-
ցակայութեան մահուան դատապարտուած են
հայ յեղափոխական քովիներու մասնակից
ըլլալուն համար:

«Միեւնոյն հեռագիրը կաւելցնէ թէ այս
վերջի երկուքը կրնան իրենց հայրենիքը վե-
րադառնալ, եթէ ուզեն, բայց Տօք. Յակոբ-
եանի արգելուած է Տաճկաստանի մուտքը:

«Կայսերական այս որոշումները Մուխթար
փաշայի միջոցաւ հաղորդուած են վերոյիշ-
եալներուն»:

Բոսկրէի այս հատուածը թարգմանելով
գիտաւորութիւննիս ուրիշ բան չէ բայց եթէ
յայտարարել մեր ընթերցողներուն թէ պէտք
չէ չփոխել այդ Տօք. Յակոբեանին անունը
մեր արտօնատիրոջ հետ, որ ամերիկեան հը-
պատակ ըլլալով ոչ կրնայ պատժուիլ Սուլ-
թանէն և ոչ ալ օգտուիլ այդպիսի շնորհէ մը:

Վաղը կիրակի, Ընթերցասիրաց ընկերու-
թեան Ընդհ. ժողովը նիստ պիտի ընէ հե-
տեւեալ օրակարգով զբաղելու համար.

1. Համարատութիւն և հրաժարական Գործա-
դիր ժողովոյ.
2. Հրաժարական և նոր ընտրութիւն Ընդհ. ժո-
ղովոյ դիւանի.
3. Նոր ընտրութիւն Գործադիր ժողովոյ:

ՇՈՒՄՈՒՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Ինչպէս կարելի է բացատրել սա իրողութիւնը
թէ, այս բեզուր դարավերջի միջոցին ուր ամեն մարդ
էն քիչը բաժնի յոգուած և վէպ մը գրած է կեան-
քին մէջ, գոնէ ապուշ մը չէ պակասած սակայն
երկրի վրայէն:

* *

Ահաւասիկ դատարկապորտ մը և յարգելի մարդ
մը. դատարկապորտը ընտրեցէք... որովհետեւ շատ
անգամ յարգելի մարդ մը կայ դատարկապորտին
մէջ և դատարկապորտ մը՝ յարգելի մարդուն մէջ:

* *

Ժամանակակից վիպասանները կը ջանան պա-
խարակել ամուսնութիւնը: Ատիկա անխոհմտութիւն
մըն է որովհետեւ եթէ ամուսնութիւնը վերնայ, այ-
լամերձութիւնն ալ գոյութիւն չպիտի ունենայ և այն
ատեն ի՞նչ բանի վրայ պիտի գրեն ժամանակակից
վիպասանները:

* *

Եթէ սրամիտ ըլլալ կուզես ուրիշներուն խօս-
քերը սրամիտ գտիր: Հանճար ունիս պիտի բռնես:

* *

Կին մը որքան աւելի դատարկամիտ ըլլայ, այն-
քան աւելի կին է:

* *

Մենամարտը՝ սուրբու և հրագէտներու հետ խա-
ղալով իրարու վնաս մը չհասցնելու արուեստն է:

* *

Պարկեշտ կիներ չկան, միայն թէ կիներ կան
որոնք ստիպուած են պարկեշտ մնալ:

* *

Հոգեբանները բժիշկներու կը նմանին. ուր որ
հիւանդ չկայ՝ կստեղծեն:

ԺԱՆԻՆ

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ինչպէս որ արդէն ծանուցած էինք,
Բարձր. Խրիվը յառաջիկայ հինգշաբթի, առ-
տուան ժամը 7ին Գահիրէէն պիտի մեկնի,
ամառուան եղանակը Մոնթաղա անցընելու
համար:

Բարձր. Խտիվին մայրը և կինը միեւնոյն
օրը առտուան ժամը 8ին պիտի մեկնին ու-
րիշ մասնաւոր կառավարմամբ մը:

—Անկլո-եգիպտական բանակէն շատ մը
սպաներ երէկ Գահիրէ ժամանեցին:

Մօտերս Սլաթին փաշայի կսպասուի:
—Խտիվական ընտանիքի անդամներու
կողմէ եղած դիմումներուն վրայ, Բարձր. Խը-
տիվը տրամադրութիւն ցուցուցած է ետ առ-
նելու այն որոշումը որով հրամայած էր այլ
եւս ամսական չի տալ վերջերս Տիկին Պոնէնի
հետ ամուսնացող բռնիս Ալի պէյ Ֆաղլի:

—Շատ մը տօղացիներ ընկերութիւններ
կազմելու կաշխատին, Սուտանի պատերազմը
վերջացածին պէս հոն հողեր գնելու համար:

—Խտիվական ընկերութեան շոգենա-
ները գնող ընկերութեան նոր անունը պիտի

ըլլայ, «Անկլո-իմպերիալ Նէվիլէյըն Էնտ Տօք-
քըմբէնի լիմիթըդ»:

Այդ շոգենաները գալ ամսէն սկսելով
անգլիական դրօշակի տակ պիտի ճամբոր-
դեն, բայց եգիպտական դրօշակն ալ պիտի
ունենան իրենց մէկ կայմին վրայ:

—Աղեքսանդրիոյ աւստրօ-հունգարական
գաղթականութիւնը որոշած է զբաղում չու-
նեցող կիներու պատասխան մը հիմնել Պրանձ
Եօզէֆ կայսեր Յոբելեանին առթիւ:

—Կըսուի թէ Միջերկրականի անգլիա-
կան նաւատորմիդին մէկ մասը եգիպտական
ջուրերը պիտի այցելէ մայիս ամսուն մէջ, իր
տարեկան պտոյտին ժամանակ:

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀՅՈՒՄՈՒՐՆԵՐ

Մասիս, 29 ապրիլ

Մաթանգասի ունակոծութիւնը հետեւանք մը
չունեցաւ. ոչ նիւթական և ոչ ալ մարդու կորուստ
կայ ինչ որ ամերիկացուց համար մեծ հարուած մը
կը համարուի:

Սպանիական նաւախուրդը Քաթ-Վէրէն մեկնե-
ցաւ և ուր երթալը անծանօթ կը մնայ:

Վաշինկթըն, 29 ապրիլ

Բազմաթիւ զօրազուեղեր զրկուեցան թամբա,
ուրիշ անմիջապէս ֆուլա պիտի երթան:

Ք Օ Ն Թ Է Ս Ս Ա Ռ Ա

ԹԱՐԳՄ. ՏԻԿԻՆ ՎԻՐԺԻՆԻ ՆՈՒԱՐԴ

Կիրակի գիշեր 8 Մայիս

ՏՕՔ. Ռ. ՈՒՐՑԱԼԵԱՆ

Ա Կ Ն Ա Ր Ո Յ Ժ

Պատիւ ունի ծանուցանելու թէ իր դարձնա-
տունը հաստատած է Գահիրէ, Պալաքի փողոց,
Բաւալ փաճառատան յետ, Մահրուսա Օթէլին մէջ,
ուր պիտի ընդունի հիւանդները ամեն օր:

Տօք. Ուրջալեան, նորագոյն գիւտերու միջո-
ցաւ, քիչ ժամանակի մէջ կը դարձանէ չիւ տաքերը,
հինցած կրակախոհները և ընդհանրապէս ամեն
տեսակ աչքի հիւանդութիւնները:

Ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրախ օ-
րերը, աղբատները ձրի պիտի դարձանէ, առաւօտ-
եան ժամ 8էն 10:

1—8

ԱՆԱԽՈՐԺ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Վենետիկի մէջ, իրիկուան դէմ, երբ ա-
ռաջին աստղերը պլպլալ կսկսին, երբ խոր-
հրդաւոր շուքեր կը սաւառնին ջրանցքներուն
վրայ, երբէք մտքերնիդ չէ՞ եկած... Տէգ-
տէմօնան, այդ անուշ, մեղքնալիք էակը որ
այնքան տխուր վախճան մը ունեցաւ. ձեզ
այնպէս մը չէ՞ր գար որ ձեր ականջին կը
հնչէ ուռենիին մեղամաղճոտ և տրտմագին
երգը, և սիրտերնիդ գէշ չէ՞ր ըլլար երբ
կանդրադառնայիք՝ արցունքոտ աչքերով, այդ
անցեալ ողբերգութեան վրայ:

Մեզք ձեր կորսնցուցած ժամանակին և
թափած արցունքներուն, եթէ զիս մտիկ ը-
նել կուզէք, ուրիշ անգամ լաւագոյն բանի
մը համար գործածեցէք ձեր զգայնոտութիւ-
նը, որովհետեւ...

Որովհետեւ Տէգտէմօնան, Շէքսպիրի Տէգ-
տէմօնան, անանկ բարկատու, աննշան կին
մին էր որ ձեր համակրութիւնը վայելելու ի-
րաւունքը չունէր: Ասիկայ, գիտեմ, տգեղ
յայտնութիւն մըն է, բայց, ինչ ընենք, ճշ-
մարտութիւնը ամեն բանէ առաջ. բաւական
է ինչքան որ խափուեցանք:

Նախ, այդ բարկատուին անունը երբէք

